

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՔԵՐՏ ԴՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

01.09.2022



Սիրելի՛ աշակերտներ և ուսանողներ

Չարգելի՛ ուսուցիչներ և ծնողներ

Սեպտեմբերի 1-ը բարի և դրական սպասումներով լի տոն է բոլորիս համար, ուստի, ընդունեք իմ անկեղծ շնորհավորանքը նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ:

Օրն ամենահիշարժանը կդառնա առաջին դասարանցիների համար. այսօր դպրոցական առաջին զանգի հետ նրանց առջև բացվում է գիտելիքի նոր ու մեծ աշխարհը՝ լի հետաքրքիր բացահայտումներով ու վառ տպավորություններով:

Սիրելի՛ փոքրիկներ, երկար ճանապարհ ունեք անցնելու. հուսով եմ, որ ուսումնական տարիները կլինեն լուսավոր, անմոռանալի ու արդյունավետ: Աշխատասիրություն, ուսումնական հաջողություններ, իսկական ընկերներ, հետաքրքիր ու հագեցած դպրոցական կյանք եմ ցանկանում ձեզ:

Իսկ միջին ու ավագ դպրոցի սովորողների համար նոր ուսումնական տարին բարձր նպատակներ սահմանելու և դրանց հասնելու հնարավորություն է: Իհարկե, շատ բան կախված է ձեր ջանքերից ու վճռականությունից: Ուստի բոլոր դպրոցականներին, ինչպես նաև միջին մասնագիտական ու բարձրագույն ուսումնական

հաստատությունների ուսանողներին մաղթում եմ, որ չվախենան դժվարություններից և չկորցնեն հետաքրքրությունը նոր գիտելիքների հանդեպ: Այդ դեպքում կարող եք հաղթահարել խոչընդոտները, դառնալ իրապես կրթված մարդիկ և նպաստել մեր մարզի ու Հայաստանի Հանրապետության զարգացմանը:

Շնորհավորում եմ մեր սիրելի ուսուցիչներին, որոնք վաղ տարիքից առաջնորդում են երեխաներին, ձևավորում նրանց անհատականությունը, բացահայտում ներուժը, կարևոր գիտելիքներ փոխանցելուց զատ սաների մեջ սերմանում հայրենասիրություն, պատասխանատվություն, աշխատասիրություն և երկրի քաղաքացու այլ կարևոր հատկություններ: Անսպառ եռանդ ու ամենօրյա ոգեշնչում եմ մաղթում ձեզ, ստեղծագործական և մասնագիտական հաջողություններ՝ ծանր ու շատ պատասխանատու աշխատանքում:

Թո՛ղ որ նոր ուսումնական տարին լինի հետաքրքիր և բեղմնավոր բոլոր նրանց համար, ովքեր սովորում և սովորեցնում են, բերի բացահայտումների, նոր ձեռքբերումների բերկրանք: Հիշեք, որ բոլոր ժամանակներում գիտելիքը եղել և մնում է հզոր ուժ:

Բարի՛ մեկնարկ 2022-2023 ուսումնական տարուն: